ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի մայիսի 29-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «**ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41**»

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «հակահրդեհային գույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 25.05.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 29.05.2018թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝

Հարգելի գործընկեր խնդրում ենք տալ պարզաբանում-շտկում

Չափաբաժին 1՝

Հարցադրում 1: ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ- 7- 41 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին չափաբաժնի կրակմարիչ Ակ 55 ի գաբարիտային չափերը պետք է լինեն ոչ թե կոնկրետ 3* 159* 1400, այլ պետք է ավելացվի թույլատրելի շեղումների սանդղակ. ոչ պակաս 154 ոչ ավել 1700, ինչպես նաև լիցքավորված կրակմարիչի քաշը պետք է նշել մինչև 230 կգ., միաժամանակ սահմանելով ստորին շեմը ոչ պակաս 210 կգ: Լիցքի քաշը պետք է սահմանել 52 ից մինչև 55 կիլոգրամի սահմաններում, քանի որ կրակմարիչը լիցքավորվում է CO^2 գազով ապա այն GOST R ISO 9001-2015 ի և անվտանգության TP TC 012/2011 պահանջներին համապատասխան ունենում է որոշակի շեղումներ, որոնք թույլատրելի են:
Համաձայն ՀՀ Գնումների մասին 16.12.2016 թ /նախկին 22.12.2010թ. ընդունված օրենքի 13րդ հոդվածի 5 կետի գնման առարկայի հատկանիշները չպետք է պարունակեն հատկանիշներ ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ հղում պարունակեն որևէ արտադրողին: Հղումներ օգտագործելու դեպքում տեխնիկական բնութագիրը պետք է պարունակի կամ համարժեք բառերը: Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի չափորոշիչները հղում է կոնկրետ աղբյուրի կամ արտադրողիուստի պետք է տեխնիկական բնութագրում ներառվի +/- և համարժեք բառը:

Հարցադրում 2: Երկրորդ չափաբաժնի /հրդեհի մարման ձեռքի գործիքներ-հրշեջ կացին/-ի տեխնիկական բնութագրում նշված սրածայր մասը 130+/- 10 մմ պետք է նշել +/-20 մմ

Հարցադրում 3: Երրորդ չափաբաժնի հրշեջ բահի լայնությունը 220 մ պետք է նշել ներառել +/-10 մմ:

Խնդրում ենք սեղմ ժամկետում տալ պարզաբանում:
Կանխավ շնորհակալություն

Պարզաբանում N 1՝

Պարզաբանումը կցվում է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Տերյանին

Հեռախոս՝* 010-29-44-18*:
***էլեկտրանային փոստ՝* *g.teryan@mil.am*:**

« ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/41» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

29.05.2018թ

ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Ես որպես ԲՄԱՊՁԲ-7/41 մրցույթի հայտը նախագծող, տալիս եմ այն պարզաբանումը, որ «Հարցադրում 1»-ում նշված ԱԿ-55 կրակմարիչի համար անհրաժեշտ է, որ գաբարիտային չափերը լինի 3x159x1400, լիցքավորված կրակմարիչի քաշը ոչ պակաս 230 կգ, իսկ լիցքի քաշը 52,20 կգ: Միաժամանակ նշեմ, որ տեխնիկական բնութագրում նշված է նաև թույլատրելի շեղում՝ 2 %, այլ շեղումներ տվյալ ապրանքանիշի համար ընդունելի չէ:

Տվյալ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրի չափորոշիչները որևէ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի հղում չեն պարունակում, քանի որ տվյալ ապրանքատեսակը արտադրում է առնվազն 3 գործարան, կամ կազմակերպություն, երկու տարբեր պետություններում:

«Հարցադրում 2»-ում նշված հրշեջ կացինը պետք է լինի 130±10 մմ, որը նախատեսված է հրդեհի կամ այլ փրկարարական գործողությունների ժամանակ ջարդման աշխատանքներ կատարելու համար: Այլ շեղումներով հրշեջ կացինը ընդունելի չէ:

«Հարցադրում 3»-ում նշված հրշեջ բահի լայնությունը պետք է լինի 220 մմ, միևնույն ժամանակ տվյալ ապրանքատեսակի համար թույլատրելի շեղումը 2 % է, այն նախատեսված է հրդեհի օջախին ավազ գցելու և այլ հրդեհաշիջման աշխատանքներ կատարելու համար: Այլ շեղումներով հրշեջ բահը ընդունելի չէ:

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

փոխգնդապետ Ս. ՍԱՂՄԱՆՅԱՆ